Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի N7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի երաժշտության (17 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի << Աբովյանի N7 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի երաժշտության (17 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում /Ձև1/. մեկ լուսանկար 3x4 չափի

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/

-անձը հաստատող փաստաթուղթ.

-Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,

-ինքնակենսագրություն /Ձև 5/

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ.

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/ :

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. ապրիլի 4-ից մինչև ապրիլի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչև 15.00 բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. ապրիլի 19-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի N7 հիմնական դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել /0222/2-19-46, /077/21-51-91 հեռախոսահամարներով: